ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/116 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շրջանակներում սոցիալապես անապահով թվով 200 դպրոցահասակ 1-7-րդ դասարան հաճախող երեխաներին տրամադրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 200 հատ (100 տղա, 100 աղջիկ) պայուսակ գրենական պիտույքներով, որից 100 հատ (50 տղա, 50 աղջիկ) նախատեսված 1-4-րդ դասարանների համար, իսկ 100-ը (50 տղա, 50 աղջիկ)՝ 5-7-րդ դասարանների համար՝ յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ. Պայուսակ աշակերտական, առնվազն 35-45 սմ լայնությամբ և առնվազն 40-45 սմ բարձրությամբ, առնվազն 10-12 սմ խորությամբ, քաշը՝ առնվազն 300-400 գրամ, հարմարեցված ձեռքով բռնելու (բռնակ) և ուսերին գցելու համար: Պետք է պատրաստված լինի ամուր գործվածքից՝ պոլիէսթեր 100%, առանց յուրահատուկ հոտի, էկոլոգիապես մաքուր, առավելագույնս ջրադիմացկուն: Պայուսակը դրսից պետք է ունենա առնվազն երկու կայծակաճարմանդե գրպաններ: Պայուսակի կայծակաճարմանդները պետք է լինեն ամուր ու որակյալ, դրանց բռնակները երկաթյա կամ համարժեք: Պայուսակը ներսից պետք է բաժանված լինի առնվազն երկու կամ երեք մասի: Պայուսակի ներսում նախատեսված լինի շղթայով գրպանիկ՝ մանր իրերի համար, որի նվազագույն չափերն են 15-20 սմ, շղթան և շղթայի գլխիկը լինի մետաղական կամ համարժեք: Պատրաստված բարձրորակ, չթրջվող կտորից, էկոլոգիապես մաքուր, ամուր, խիտ հումքից, (100% պոլիէստեր, պատվիրատուի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ), զերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, հետնամասը պետք է լինի հատուկ օրթոպեդիկ գոգավորությամբ, անհրաժեշտության դեպքում ներկայացվի համապատասխան սերտիֆիկատ օրթոպեդիկ

	կառուցվածքի վերաբերյալ: Պայուսակի ուսակալները պետք է լինեն ամուր և փափուկ ամրակներով: Պայուսակի առջևի մասում նախատեսված լինի շղթայով դարակ նվազագույնը 30-30սմ չափերով: Պայուսակի մեջքի, հատակի և առջևի հատվածները ունենան չճկվող ամուր ներդիրներ: Պայուսակի երկու կողմերից պետք է լինեն հատուկ տեղեր շշով հեղուկի համար, ինչպես նաև լինեն կապիչներ /լիպուչկա/ հեղուկի շիշը իրենց տեղերում ամրացնելու համար: Պայուսակի վրա ցանկալի է ամրացված լինի բեյջ՝ տվյալներ լրացնելու համար: Պայուսակի ներսի հատվածը պետք է որակյալ աստառապատված լինի: Պայուսակի գույնը և նկարազարդումը՝ ըստ պատվիրատուի: Յուրաքանչյուր պայուսակ պետք է պարունակի՝ Տետր – 3 հատ առնվազն 96 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր – 3 հատ առնվազն 96 էջանի, տողանի, բարձր որակի Տետր – 4 հատ առնվազն 48 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր – 4 հատ առնվազն 48 էջանի, տողանի, բարձր որակի Տետր –3 հատ առնվազն 24 էջանի, վանդակավոր, բարձր որակի Տետր –3 հատ առնվազն 24 էջանի, տողանի, բարձր որակի Տետր – 5 հատ առնվազն 12 էջանի, վանդակավոր, բարձր որակի: Տետր – 5 հատ առնվազն 12 էջանի, տողանի, բարձր որակի Գրիչ – 7 հատ, գնդիկավոր կամ համարժեք, փակիչով, կապույտ գույնի Գրիչ – 3 հատ, գնդիկավոր, կարմիր գույնի Գրչատուփ – 1 հատ, պատրաստված լինի չճկվող ամուր հումքից, բացվի գրքաձև՝ 180 աստիճանի, փականը (ցեպ) և գլխիկը լինի մետաղյա կամ համարժեք, չափսերը՝ երկարությունը նվազագույնը 20 սմ, լայնությունը՝ նվազագույնը 12 սմ, բարձրությունը նվազագույնը 2,5 սմ: Գրչատուփի բացված կողմերի վրա ներսից կարված լինեն ռեզինե կամ համարժեք ժապավեններ՝ բաժանարարներով, նախատեսված գրիչների, մատիտների, ռետինի, սրիչի և այլ գրենական պիտույքները ամրացնելու և տեղավորելու համար: Պատրաստված էկոլոգիապես մաքուր, ամուր, որակով հումքից: Գունավոր մատիտ – 1 տուփ, նվազագույնը 24 գույն (ոչ երկկողմանի), 6 անկյուն կամ եռանկյունե կտրվածքով: Մատիտների տուփը լինի հաստ ստվարաթղթից,պլաստմասե կամ համարժեք, մատիտների երկարությունը նվազագույնը 18 սմ, փափկությունը HB, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Քանոն – 1 հատ, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, գծանշումների մակերեսը ուռուցիկ, երկարությունը՝ նվազագույնը 30 սմ: Ռետին – 1 հատ, նախատեսված մատիտով գրվածները ջնջելու համար: Սրիչ – 1 հատ, մատիտ սրելու համար: Նկարչական տետր - 1 հատ, առնվազն 32 թերթ, հաստ ստվարաթղթե կազմով: Կազմը և նկարչական թղթերն ամրացված գլանով: Նկարչական ալբոմի թղթերը պատրաստված լինեն նվազագույնը 90 գրամանոց թղթերից: Վերոնշյալ բոլոր ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտներին (ՀՍՏ), և Ռուսաստանի Դաշնության ստանդարտներին (ԳՕՍՏ Ռ), պայմաններին: Առաջարկվող բոլոր ապրանքները նախապես համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժնի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Շուշան Տեխնիկս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/116 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	